


«ՓՈՂ ՏՈՒԷ՛՛ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ՓԱՆ.» ԳՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԼԵ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՅՈՒՆԻՍ 1, 1906

ԹԻՒ 6



**ՊՕՂՈՍ ՄԵԼԻՏԷՒ ՄԷՋ**

Պօղոսի նաւարեկութեան պատմութիւնը կարգալու ատեն շարունակ մեր մտքին կը զարնէ թէ ի՞նչ մեծ տարբերութիւն կայ աշխարհի այն ժամանակուան և հիմակուան վիճակին մէջտեղ: Այն ատեն նաւերը չէին համարձակեր ձմեռը նաւարկել Մի-

ջերկրական ծովուն վրայ, և ուստի տարուան մէջ քանի մը ամիս կը դադրէր ծովային վաճառականութիւնը: Այն ատեն կողմնացոյցը տակաւին չէր գտնուած, և երբ ոչ արև և ոչ երկնային ուրիշ մարմիններ կ'երևէին, չկար ստուգելու միջոց թէ նաւը դէպ ո՛ր կ'երթայ: Ուստի նա-

ւապետը որոշեց երթալ կրեւտէի մէկ նաւահանգիստէն միւսը միայն, որ աւելի ապահով կը համարուէր ձմերելու համար երբ կը յարձակէին սոսկալի փոթորիկներ, որոնց դէմ նաւը չէր կրնար պաշտպանուիլ: Երբ հասան Մելիտէ, որ է Մալթա, իբր միայն չորս ժամ հեռու էին Սիկիլիայէ, Միջերկրականի միջակ շողեւնաւի մը համար, և սակայն անոնք երեք ամիս հոն մնալ պարտաւորեցան: Բայց ժամանակը պարապ չանցաւ: Վասն զի Պօղոս լաւ գործածեց զայն՝ հիւանդներ բժշկելով և Աւետարանը քարոզելով: Կղզիին տղէտ բնակիչներուն անոր ծանօթանալը նախաինամական տնօրինութիւն մըն էր: Պօղոս կալանաւոր մըն էր, և պահապան զինուորներու հսկողութեան ներքեւ Հռոմ կ'երթար, և ուստի չատ պիտի չյարգուէր և կամ իբրև վարժապետ պիտի չնկատուէր: Բայց Պօղոս այն ծոյլերէն չէր որոնք կ'ուզեն որ անգործ նստին և ուրիշներ ծառայեն իրենց: Երբ կրակ վառել պէտք եղաւ, ինք օգնեց խոհիներ ժողովել: Եւ երբ խոհիները կրակին բռնեց բոցավառ դէզին վրայ դնելու համար, օձ մը, որ թրմրած էր ցուրտէն, արթնցաւ տաքէն և անոր ձեռքէն բռնեց: Բնիկները զիտէին թէ այդ օձը այն տեսակէն էր որուն խաճուածքը անշուշտ և չուտ կը մեռցնէր: Բայց Պօղոս օձը կրակին մէջ թօթուեց և իրեն մնաս մը չեղաւ: Այս բանը կրնայ դիպուա-

ծական նկատուիլ, բայց մենք կը կարծենք թէ չիտակ է անոր մէջ Աստուծոյ մատը տեսնել: Անիկա հոն գրտնուողներուն ուշադրութիւնը հրաւիրեց առաքեալին վրայ թէ ան Աստուծոյ մասնաւոր պաշտպանութեան ներքե կը գտնուէր: Մենք չենք ակնկալեր որ Աստուած հրաշք գործէ մեզ պաշտպանելու համար, բայց որչափ ատեն որ ուղղութիւն ընենք, կրնանք մեր անձերը Աստուծոյ ձեռքերուն յանձնել առանց վախի, զիտնալով թէ անիկա մեզ պաշտպանելու և խընամելու կարող է:

-----

ՀԻՆ ՏՐՈՎԱԿԱՆ


Կ. Պոլսոյ մատակայ տեղերէն մէկը, որ պատմական մեծ շահեկանութիւն ունի և նորն ատեն դիւրին կ'այցելուի, Տրովադայի, կամ Տրոյիոյ, դաշտն է: Հիմա հոն չկայ տեսնելու բաներ, վասն զի գտնուած բոլոր հնութիւնները թանգարանները տարուած են ապահով պահուելու համար, և սակայն տեղը կ'արժէ այցելել, և շատ Եւրոպացիներ և Ամերիկացիներ հոն կ'երթան ամէն տարի: Անոնք որ Հոմերոս կարդացած են, մասնաւորապէս կը հրապուրուին, վասն զի այս բանաստեղծին գրած համբաււոր քերթուածին, իրականին, մէջ նկարագրուած տեսարանները Տրովադայի և անոր շրջականերուն կը պատկանին: Աւանդութեան նայելով, Յոյները տասը տարի պաշարեցին Տրովադան, զոր վերջապէս առին և կործանեցին: Այս դէպքերը պատահեցան հեռաւոր անցեալին մէջ, վասն զի քաղաքին կործանման թուականը Քրիստոսէ իրր 1,200 տարի առաջ է կ'ըսուի: Առաջները ոմանք տարակուսեցան երբեք այսպիսի քաղաքի մը գոյութեան վրայ, և խորհեցան թէ Հոմերոսի բոլոր նկարագրածները լոկերեակայութեան ծնունդ էին և չունէին պատմական հիմ. և այսպիսի քաղաքի մը գոյութիւն ունենալուն հաւատացողներն ալ որոշ չէին կրնար ըսել թէ ճիշդ ո՛ր էր անիկա, ընդհանուր կարծիքն այն էր թէ քաղաքը կը կենար փուռար Պաչը կոչուած տեղը, որ իր ետեւը ունի լեռ մը, Պալի Տաղը: Բայց ասիկա ծովէն այնչափ հեռու է որ չպատասխաներ Հոմերոսի նկարագրութիւններուն, և հիմա

ստուգուած է թէ քաղաքին իրական տեղն էր Հիսարլըզ կոչուած բլուրը, որ Հելլեսպոնոսի (Տարտանէլի նեղուց) շատ աւելի մօտ է:

Մենք Կ. պոլսէ Հիսարլըզ հասնելու համար շոգենաւ նստանք և Չանագ գալէ ելանք, ուրիշ առաւօտուն ճամբայ ելլելով գացինք Լորէնքէօյ, որ է Յունարնակ մեծ գեղ մը: Ասոր մօտ Անդրիացիք խրիմու պատերազմին ատենը իրենց հիւանդ զինուորներուն համար ապաքինարան մը ունեցան շնորհիւ բարեխնամ կառավարութեան, Հոն կէսօրուան ճաշն ըրինք և ճամբայ ելլելով քանի մը ժամէն հասանք Հիսարլըզ: Պեղումները քիչ տեղի վրայ սկսուած էին Տարտանէլի Ամերիկեան հիւպատոս Մր. Բէյվըրթի հսկողութեան ներքե, Այնուհետև Տր. Շիլիման ձեռք զարկաւ գործին 1871ին, և անոր մահէն

ԳԱՌՆ ԳԱՒԱԹ ՄՐ  
Դառն շատ գաւաթներ կան զորոնք մարդիկ կը խմեն, բայց քիչեր կան արեւոյդին շրթունքին դպածներէն աւելի դառն: Կայ ցաւի և վշտի գաւաթը, յուսախարութեան և անպատուութեան գաւաթը, անձկութեան և տառապանքի գաւաթը, և անոնց ամէնուն մէջ ի՞նչ է աւելի դառն քան խմել մեր սիրելիներուն արցունքները: Լսենք սա արցունք խմելու պատմութիւնը:

Քանի մը հոգի ծերուկ Ուսէփի առաջարկեցին ոգեղից ըմպելի խմել, իսկ ան պատասխանեց, «Տղաք, ես պիտի չխմեմ. եթէ դուք չխմէք ինչ որ ես խմեմ, Տղաքը հաւանեցան և շարուեցան զինետան սեղանին առջև: Ամէնն ալ Ուսէփի դարձան և անոր նայեցան հետաքրքրութեամբ. «Պարոն, ինձի գաւաթ մը ջուր տուէք», ըսաւ գինեպանին: «Ի՞նչ, ջուր: «Այո», ջուր. կը խոստովանիմ թէ ասիկա նոր ըմպելի մըն է ինձի համար, և կարծեմ հոս հազուագիտ է: Քանի մը օր առաջ երբ խուճ մը եղած ձկնորսութեան գացինք, մեզի հետ ընտիր օղի առինք և զուարճացանք: Մինչև իրիկուն լաւ մը խմեցի և զինովցայ, սողակեցայ ծառի մը ներքև և քնացայ: Տղաքը խմեցին բոլոր օղին և քաղաք դարձան: Անոնք խորհեցան թէ աղուոր կատակ մը բրին գիս հոն թողելով գինով վիճակի մէջ, և պատմեցին ասդին անդին: Տղաս լսեց լուրը և տունը պատմեց: Ես բոլոր գիշերը պառկեցայ այդ ծառին ներքև, և երբ առաւօտուն արթնցայ, ահա կինս քովս գտայ: Բան չըսաւ երբ արթնցայ, բայց տխրութեամբ մէկ կողմ դարձուց իր գլուխը, և տեսայ որ կը հեծկտար: Երանի՛ թէ հրաժարէի սա խմուքէն, ըսի: Այն ատեն կինս գաւաթ մը հանեց, զոր իրեն հետ բերած էր, և զանիկա ճամբան աղբիւրէ մը լեցնելով ինձի երկնցուց: Երբ գաւաթը ինձի երկնցնելու ատեն անոր վրայ ծռեցաւ որպէս զի չտեսնէի իր աչքերը, ջուրին մէջ արցունքի կաթիլ մը տեսայ: Առի գաւաթը և խմեցի: Այն ատեն ձեռքերս վեր բարձրացնելով ուխտեցի որ ա՛լ պիտի չխմեմ կնոջս արցունքները, ինչպէս կը խմէի քսան տարիներէ ի վեր: Գիտե՛ք, տղաք, թէ



ետքը պեղումները շարունակուեցան Տր. Տարիֆէլտի հսկողութեամբ: Արդիւնքն այն եղաւ որ հասկցուեցաւ թէ այդ տեղ վրայէ վրայ ինը քաղաքներ շինուած են, որոնց հինգը Հոմերոսի Տրովադայէն ալ հին էին: Գտնուեցան կաւէ ամաններ, դրամներ, դէնքեր, քարէ գործիքներ, քանդակներ, բոլոր բեկորներ, մարդկային ոսկորներ և ուրիշ շատ բաներ, նաև պարիսպներ, մարմարիտնով սալարկուած գետիններ և շէնքերու հիմեր: Այս պատկերին մէջ կը տեսնենք Օտիուսը, այսինքն երաժշտութեան և թատերական հանդէսներու յատուկ ժողովատեղին: Երբ առաջին անգամ երևան բերուեցան մարմարեայ նստարանները, անոնք կարգ կարգ էին, և մէկ կարգը միւսէն վեր կը բարձրանար: Բայց մարմարիտները անկէ վերցուած են հիմա:

-----

տասը տարի պաշարեցին Տրովադան, զոր վերջապէս առին և կործանեցին: Այս դէպքերը պատահեցան հեռաւոր անցեալին մէջ, վասն զի քաղաքին կործանման թուականը Քրիստոսէ իրր 1,200 տարի առաջ է կ'ըսուի: Առաջները ոմանք տարակուսեցան երբեք այսպիսի քաղաքի մը գոյութեան վրայ, և խորհեցան թէ Հոմերոսի բոլոր նկարագրածները լոկերեակայութեան ծնունդ էին և չունէին պատմական հիմ. և այսպիսի քաղաքի մը գոյութիւն ունենալուն հաւատացողներն ալ որոշ չէին կրնար ըսել թէ ճիշդ ո՛ր էր անիկա, ընդհանուր կարծիքն այն էր թէ քաղաքը կը կենար փուռար Պաչը կոչուած տեղը, որ իր ետեւը ունի լեռ մը, Պալի Տաղը: Բայց ասիկա ծովէն այնչափ հեռու է որ չպատասխաներ Հոմերոսի նկարագրութիւններուն, և հիմա

որոնք էին որ զիս թողուցին: Դուք ամենք ալ այն բազմութեան մէջ էիք: Գինեպան, ինձի գաւաթ մը շուր ևս տուր:”

Երբ այդ մարդը իր առաջին բաժակը խմեց ուրախ զուարթ, չէր մտածեր թէ իր սիրելի կնոջ արցունքները կը խմէր: Ուրիշներ ալ կան, որոնց արցունքները կը հոսին. հազարաւորներ են անոնք, որ կուլան իրենց սիրած բարեկամներուն վրայ որոնք կը խաբուին և գերի կ’ըլլան ոգելից ըմպելիքին:

Գեոահասները, որոնք տակաւին ազատ են ոգելից ըմպելիքներէն, թող նային որ երբեք չընեն բան մը որով իրենց ամենասիրելի բարեկամները վշտանան և արցունք թափեն: Որքան լացող աչքեր ժպիտով պիտի փայլէին եթէ գիտնային թէ իրենց սիրելիները թողած են գինին և գինուցնող ըմպելիքները, և իրենց ուսերը Տէրջը վկայութիւններուն դարձած են:

ԽՈՒՆԵՐՈՒՆ ԿԹՈՒԹԻՒՆԸ

Կուրութիւնը կրնայ խուլութենէն աւելի մեծ աղէտ նկատուիլ, և սակայն կոյրը կը թելը խուլը կը թելէն աւելի դիւրին է, վասն զի խուլը լեզու չունի, և անոր համար աւելի կտրուած է ուրիշներու հետ հաղորդակցութենէ: Բայց խուլերու աւելի աղէկ դպրոցներուն մէջ այսօր կը թուրիւնը կը արուի այնպիսի զարգացեալ մեթոտներով, որ նշանաւոր արդիւնքներ ձեռք կը բերուին: Խուլ մանուկներ շատ ատենէ ի վեր կը կըրթուին իրենց մատերով խօսիլ և, մինչև անգամ առանց դպրոց երթալու, կը սորվին հաղորդել շատ գաղափարներ նշաններու լեզուով: Բայց հիմա խուլ մանուկներ խօսիլ կը սորվին իրենց չըթուրով միւսներուն պէս: Իրենց ուսուցիչներուն բերանները կը դիտեն, և յետոյ իրենց բերաններուն ալ միևնոյն ձևը կուտան: Երբեմն հայելի կը բռնեն իրենց առջև, տեսնելու համար թէ իրենց շրթուները ճիշդ իրենց ուսուցիչներուն շրթուներին պէս կը բացուին: Նաև մանուկը իր ձեռքը կը դնէ ուսուցչին կոկորդին վրայ և միւս ձեռքը՝ իր կոկորդին վրայ, և ուսուցչին կոկորդի ձայնական լարերուն շարժումը

զգալով՝ անոնց կը նմանցնէ իրեններունը: Նախ ձայնաւորները կը սորվեցուին, և ասիկա բազմաթիւ գիւրիւն է, յետոյ բազմաձայնները, և կը պահանջուի երկարատեւ և համբերատար գործադրութիւն մինչև որ կատարելապէս հնչուին անոնք: Այնուհետև իրարու քով կը դրուին, ինչպէս նախ բառին մէջ, և ուսուցիչը կ’օգտուի պատկերը կը գծէ սև տախտակին վրայ, և մանուկները կը հասկնան թէ այդ կենդանին ցուցնող բառը կ’արտասանեն: Կամ անոնք զուր բառը կ’արտասանեն, և ուսուցիչը բաժակ մը շուր կը թափէ անոնց առջև: Եւ այսպէս մանուկները կը սորվին ոչ միայն խօսիլ, այլ նաև հասկնալ ուրիշներուն ըսածը անոնց շըրթուներին շարժումը դիտելով: Երբեմն



տեսնուած է որ երկու խուլ մանուկներ, որոնք այսպէս կը թուրած են, իրարու հետ կը խօսին իրենց չըթուրով շարժելով բայց առանց ձայն հանելու, վասն զի չըթուրին շարժելով և ոչ թէ ձայնով է որ անոնք իրար կը հասկնան: Գծադրներու բոլոր դասակարգերուն պէս խուլները շատ օգտուած են բարեսէր անձերէ և ներկայ ժամանակիս զարմանալի հնարագիտութիւններէն:

ԲԱՐԿԱՅՈՑ ՀԱՐՈՒՄԸ

Արամ և անոր քոյրը Վիրգին առաւօտ մը մէկտեղ կը խաղային: Վիրգինի մէկ խօսքը բարկացուց Արամը, և Արամ, իր կիւրքը չկրնալով զսպել, զարկաւ քոյրը: Վիրգին դեղեկեղով սիւնի մը քով գնաց և ջանաց անոր կ’ըթելիլ, բայց կորսնցնելով իր հաւասարակշռութիւնը, սանդուղի աստիճաններուն վրայ ինկաւ

և աղաղակեց, «Ես միտք չունէի քեզ բարկացնել, Արամ:» Արամ իր սաստիկ բարկութեան մէջ աւելի ուրախ եղաւ քան ցաւեցաւ երբ տեսաւ Վիրգինի իշխալը: Բայց երբ տեսաւ թէ իր քոյրը չարժիր կամ ջանար ելլել աստիճաններուն վրայէն, որոնց վրայ ինկած էր, սկսաւ վախնալ: «Վնասուեցա՞ր», հարցուց: Վիրգին չպատասխանեց: Արամ վազեց անոր քով և զանիկա վեր վերցուց: Արիւնը պզտիկ կարմիր հոսանքի մը պէս կը վազէր գլխուն քով բացուած վէրքէ մը: Աղջիկը անզգայացած էր: Արամ զանիկա տուն մտցուց և ըսաւ իր մօրը թէ իրենք կը խաղային, և Վիրգին ինկած էր սանդուղին աստիճաններուն վրայ: Առաջին անգամ անոնք յիսուովեցան փոքրիկ աղջկան համար:

Բայց այդ օրը իրիկուան դէմ Վիրգին սկսաւ խելքը կորսնցնել և դառանցել: Բժիշկ կանչուեցաւ: Բժիշկը դառնալու ատեն անկողին քովէն ուր պառկած էր Վիրգին, լուրջ դէմք մը կը ցուցնէր և, «Ուղեղային տենդի նշաններ կը տեսնեմ: Վէրքը երկցածէն աւելի սաստիկ է», ըսաւ: Արամ շատ չէր հասկնար թէ ինչ է ուղեղային տենդը, բայց բժիշկին դէմքը և խօսքերը վախցուցին զինքը:

«Ո՛հ, մայր, յանցանքը բոլորովին իմն է», ըսաւ իր երեսը անոր գիրկին մէջ ծածկելով: «Բարկացայ և զարկի աւնոր և ինկաւ: Պիտի մեռնի, գիտեմ, պիտի մեռնի, և զիս պիտի կախեն զանիկա սպաննելուս համար: Հետեւեալ օրը Վիրգին աւելի գէշցաւ: Ետեւեւեւ կը զառանցէր և կ’ըսէր, «Ես միտք չունէի քեզ բարկացնել, Արամ, կը ցաւիմ:» Երբ Արամ լսեց անոր այսպէս ըսելը, սիրտը կտոր կտոր եղաւ: «Ո՛հ, երանի՜ թէ անոր տեղն ըլլայի», ըսաւ Արամ իր մօրը, «Եթէ՛ զպզտիկ Վիրգին, հիմա կը հասկնամ թէ անոր միտքը զիս բարկացնել չէր: Բայց այն ատեն չկեցայ որ խորհէի անոր վրայ: Եթէ Աստուած առողջացնէ զանիկա, ա՛լ երբեք կ’ըսէ խօսք մը պիտի չիսսիմ անոր, ոչ ալ գէշ պիտի վարուիմ անոր հետ:» «Ի՞նչ արթնեմ որ Աստուած մեզի շնորհէ զանիկա», ըսաւ մայրը լրջօրէն: «Թէ՛ շնորհէ թէ՛ ոչ, աստիկա քեզի դաս մը պիտի ըլլ

լայ զոր, վտանհ եմ թէ, բնաւ պիտի չ'ստանաւ։”

Քանի մը օրեր վիրգին մահուան դրան մօտ կը տարուբերէր. Ամէն օր շատ անգամ Արամ անոր անկողնին քով կը սողոսկէր իմանալու համար թէ խելքը վրան եկած էր, որպէս զի ներում խնդրէր անկէ։ Երբ Արամ անոր անունը կը կանչէր, վիրգին կ'ըսէր, «Իս միտք չունէի քեզ բարկացնել, եղբայր, կը ցաւիմ, կը ցաւ, սիմ։» Այն ատեն Արամ սաստիկ կ'արտասուէր, և կ'առանձնանար ու կը խնդրէր Աստուծմէ որ ապրեցնէ զանիկա։

Արամի աղօթքին պատասխանը տրուեցաւ։ Օր մը բժիշկը ըսաւ անոնց թէ բոլոր վտանգն անցած է։ Արամ անկողնին քով գնաց, և ուրախութիւն ու տրտմութիւն լեցուցին իր սիրտը երբ վիրգին անոր երկնցոց իր նիհար փոքրիկ ձեռքը ժրպտելով, «Ո՛հ, վիրգին, ներէ ինձի», ըսաւ և սկսաւ լալ։ «Ո՛հ, չես գիտեր թէ որչափ կը ցաւիմ։» վիրգին անոր պարանոցն ինկաւ և փսփոսաց, «կը ցաւիմ որ քեզ բարկացուցի, Արամ, Մենք պիտի ջանանք որ ա՛լ իրար չբարկացնենք. այնպէս չէ։»

Արամ երբեք չմոռցաւ իր համարը, Ատիկա օգնեց անոր աւելի բարի տղայ մը ըլլալուն։

ՓԻՉԱՅԻ ՀԱՍԵԱԼ ԱՇՏԱՐԱԿԸ

Իտալիոյ փիզա քաղաքի Հակեալ Աշտարակը աշխարհիս ճարտարապետական հրաշալիքներէն մէկն է։ Կ'ըսուի թէ Ժ. Գարուն կանգնուած է իննսպրուքի Գերման ճարտարապետ վիլհելմէ։ Եթէ անիկա այդ տեսակ շէնքի միակ օրինակն ըլլար, զանկա կառուցանողին ծրագիրն ու նպատակը այժմեանէն շատ աւելի գաղանիք պիտի ըլլար։ Կըսուի թէ այս աշտարակին շինութիւնը 1350ին աւարտեցաւ։ Ճիշտ քովը կը կանգնի փիզայի մայր եկեղեցին, որուն շինութիւնը աւարտեցաւ Ժ. Գարուն սկիզբը։ Անոր դիրքը և ըրած ծառայութիւնը կը հաստատեն թէ շինուած է իբրև զանգակատուն մայր եկեղեցւոյն։ Այն ժամանակ իտալիոյ մէջ ընդհանուր սովորութիւն էր, ինչպէս տակաւին հիմա է, զանգակատունը եկեղեցիէն զատ տեղ չիմել։

Այս աշտարակը ճերմակ մարմարիոնէ շինուած է համակ, և վեց յարկ ունի, և ծածկուած է տափակ տանիքով մը որմէ կը դիտուի չըջակայ չքեղ տեսարանը։ Աշտարակը ուղղա-

հայեացէն տաներեք մատնաչափ կը հակի հարիւր ութսունուերեք ոտք բարձրութեան վրայ։ Յաճախ հարցուած է թէ այս հակումը դիպուած մ'իջ եղած է թէ յատուկ դիտաւորութեամբ։ Բայց գրեթէ չկայ տարակոյս թէ դիպուածով եղած է, հիմերուն խախտուելուն պատճառաւ։ Վասն զի ամէնէն վերի յարկը վարին ներուն չափ հակած չէ։ Այնպէս կ'երևի թէ պակտութիւնը շիտկելու ջանք մը եղած է շինուելու միջոցին։ Ուրիշ պարագայ մը որ այդ կարծիքին կը տանի, սա է թէ ամէնէն մեծ զանգակը, որ վեց տակառաչափ ծանրութիւն ունի, հակած կողմէն հեռու կախուած է։ Գարձեալ, միայն ասիկա չէ իտալիոյ մէջ այդ ժամանակները շինուած այդ տեսակ աշտարակը։ Անոնցմէ երկու հատ ալ Պոլոնիակոյ, որոնց մէկը սկսուեցաւ 1110ին։ Անիկա ուղղահայեացէն ինը ոտքէ աւելի հակած է և ունի հարիւր վաթսուներեք ոտք բարձրութիւն։ Անոր այս վիճակին մէջ հիմերը այնքան արագ խախտեցան, որ աշտարակը կիսկատար թողուեցաւ։ Պոլոնիայի միւս աշտարակը երեք հարիւր քսանըմէկ ոտք բարձրութիւն ունի և ուղղահայեացէն աւելի քան վեցուկէս ոտք հակած է։

Հակեալ աշտարակը վտանգաւոր կ'երևի, և եթէ չափազանց հակի, կը փլչի։ Եւ հակեալ աշտարակը այնքան ծանրութիւն չկրնար կրել կամ այնքան ճնշումի դիմանալ որքան շիտակ կանգնած աշտարակը։ Եւ մարդ մը որ մէկ կամ միւս կողմը կը հակի, այնքան զորաւոր չէ և չկրնար կրել այնչափ նեղութիւն և ճնշում որչափ Աստուծոյ առջև ուղիղ և մարդոց առջև շիտակ մէկը, և որ ոչ կը դառնայ, ոչ տեղի կուտայ և ոչ կը ծռի, այլ ուղղութիւն կ'ընէ ամէն պարագայի մէջ։

ԻՆՉՈ՞ ՀԱՄԱՐ ԿՈՌԻՆՅԱՆ

Տղայ մը տուն եկաւ կաս կարմիր կտրած, երեսը խոժոռած և կիրք եւլած։ «Եկուր տղաս, ի՞նչ կայ, կ'երևի թէ կուր ըրած ես. այդ տղան քիզմէ մե՞ծ էր», ըսաւ հայրը։ Տղան անհանգիստ կ'երևէր, և երեսը ծռուկեց։ «Ո՛չ, չեմ գիտեր», «Իրաւ ինչի՞ համար կուրեցաք, նայի՛ք», երկար լռութիւն, և յետոյ բերնէն փախուց ճշմարտութիւնը։ «Ինչու որ իր խնձորին կէսը ինձի չտուաւ։» «Ո՛րեմն դուն աւազակ եղեր ես, բու ընկերիդ ստացուածքը յափշտա-

կելով. նաև բռնաւոր մը, վատ մը, ծեծելով պզտիկ տղայ մը։ Գնա հիմա, լուացուէ և հագուէ։» «Լաւ ծեծի մը արժանի է», ըսաւ քորը։ «Ո՛չ երբեք. ինչու որ սուտ չիստեցաւ, հապա համարձակ խոստովանեցաւ ճշմարտութիւնը», պատասխանեց հայրը։ Տղան, ազատուելուն համար ուրախ, չուտ մը սեղան վերադարձաւ ժպտուն երեսով։

«Քեզի տեղ չկայ հոս», ըսաւ հայրը հանդարտութեամբ։ «Ասանկ սկզբունքներ որոնցմով կը գործես, այս սեղանին սկզբունքները չեն. քեզի պէս վարմունք ցուցնող տղայ մը արժանի չէ այս սեղանէն ուտելու, քեզի յարմար կերակուրը պիտի գտնես խոհանոցին անկիւնը»։ Բայց այսպէս նախաճաշել և ընթրել անտանելի եկան տղուն։ «Չեմ կրնոր երբեք ետ գալ նորէն», հարցուց խեղճ տղան։ «Ո՛նչու, երբ շիտկես ընթացքը։» «Բայց ի՞նչպէս կրնամ ատիկա ընել», ըսաւ տղան։ «Քու ստակովդ խնձոր մը ծախու առ, զանիկա փոքրիկ տղուն տուր և ներում ինչդէ անկէ։ Այն ատեն անգամ մըն այ պատուաւոր տղայ պիտի ըլլաս, և մենք ուրախութեամբ նորէն սեղանակից պիտի ընենք քեզ։» Եւ այսպէս կարգադրուեցաւ խնդիրը։

ԻՐ ՄՈՐ ՊԱՏԿԵՐԸ

Մեզդիւր թագաւորը էտուրրա է գահը բարձրանալուն մօտերը երբ կառքով կ'անցնէր գիւղական ճամբէ մը, պատահեցաւ ծերունի կնոջ մը որ ծանր կողով մը կը տանէր դժուարութեամբ։ «Ինչու ստի», ըսաւ իշխանը, և բարի կինը ուրախութեամբ ընդունեց հրաւերը և մտաւ կառքը։ «Ի՞նչ ունիք ձեր կողովին մէջ», հարցուց իշխանը զոր կինը չէր ճանչնար։ «Հաւ կիթ, կարագ և կանաչդէններ», պատասխանեց պառաւը։ «Իս թարմ հաւկիթ շատ կը սիրեմ», ըսաւ իշխանը, և եթէ ատոնք ինձի ծախեք, ձեզի պիտի տամ մօրս պատկերը»։ «Չեք մօրը պատկերը», պոռաց ծերունի կինը, «ատկէ ի՞նչ օգուտ ինձի»։ «Ո՛հ, անչուտ օգուտ կայ», ըսաւ իշխանը խնդալով, և երբ կառքը կնոջ անակին դրանք առջև հասաւ և իշխանը օգնեց կնոջ վար իջնելուն, իշխանը իր ձեռքը կողովին վրայ դրաւ և վրան վիթթորիա թագուհւոյն պատկերը կրող Անգղ. ոսկի մը տուաւ կնոջ որ ապշեցաւ մնաց։

Տարեկան բաժանորդագիր՝ 6 զաճ. արժած կանխիկ, ամէն տեղից համար։

Ամերիկայի Միտիոնապոց Ընկերութեան կողմէն Արքայական Զ. Բ. Կրի՛ն Տնօրէն—Խմբագիր Լ. Ս. ՊԱՄԻՆԸՄ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՈՒԼՈՒ  
Ի ՏՈՒՐՈՒՆՆԻ ՈՒ ԵՐԵՎԱՆ  
Ճինճանճար Եօզուշու, Ամերիկան Խան